

# ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## ԹՈՂ 2022-Ը ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՈՒ ՆՈՐ ԾՆՈՒՆԴՆԵՐԻ ՏԱՐԻ ԼԻՆԻ

# ՎՐԱՍՏԱՆ

«ՅՐԱՆՇԱՆՈ» (ՆԱՅԱՅՈՒՅՈՒՄ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 1 - 2 (17008) ՇԱՐԱԹ 1 ՀՈՒՆՎԱՐԻ 2022 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՐԹԻ

### ԳՈՐԾԱԴԻՐ

## ՊԱՏՎԱՍՏԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ 200 ԼԱՐԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ԿՏՐՎԻ ՆԱԵՎ ՀՈՒՆՎԱՐԻՆ. ՏԱՐԻՔԱՅԻՆ ՇԵՍԸ ՆՎԱԶԵՑՎՈՒՄ Է ՄԻՆՉԵՎ 50 ՏԱՐԵԿԱՆ

Դեկտեմբերի 28-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ, անցկացվեց միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստը:

Նիստի մասնակիցները քննարկեցին կորոնավիրուսի համավարակով պայմանավորված իրավիճակը, մտահոգություն հայտնեցին ինչպես վարակման մակարդակի, այնպես էլ՝ մահացության թվի ավելացման կապակցությամբ, խստեցին «Օմիկրոնի» տարածումը կանխելու ուղղությամբ իրականացվող միոցառումների մասին: Որպես կանխարգելիչ հիմնական միջոց, նշվեց պատվաստումների գործընթացի ակտիվացման անհրաժեշտությունը: Միջգերատեսչական համակարգող խորհուրդը որոշում կայացրեց պատվաստման համար նախատեսված 200 լարի հավելավճարը շարունակել հունվարին, իսկ տա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



### ՕՐԵՆԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

## ՇԱԼՎԱ ՊԱՊՈՒԱՇՎԻԼԻՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Դեկտեմբերի 29-ին Վրաստանի խորհրդարանն իր լիազույժար նիստում պատգամավորների՝ 88 կողմ էլ 1 դեմ ձայներով խորհրդարանի նախագահ ընտրեց «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունից առաջադրված 45-ամյա Շավա Պապուաշվիլուն:

Քվեարկելու համար գրանցվել էր 104 պատգամավոր, խորհրդարանի նախագահ ընտրելու համար անհրաժեշտ էր 76 ձայն: Շավա Պապուաշվիլու թեկնածությանն աջակցող 88 խորհրդարանականների թվում եղել է առնվազն հինգ ընդդիմադիր: Կողմ քվեարկած մյուս 83-ը «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» իշխող կուսակցության խորհրդարանականներն են:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



### ԱՄԱՆՈՐՅԱ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

## ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆ ՈՒՒԲԵՆ ՍԱԴՊՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ



Սիրելի վիրահայեր, եղբայրական վրաց ժողովուրդ, Սրտանց շնորհավորում եմ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ձեզ եւ ձեր ընտանիքներին մաղթելով առողջություն եւ նորանոր հաջողություններ: Թող գալիք 2022 թվականը ամբողջ աշխարհի եւ, մասնավորապես, մեր տարածաշրջանի համար լինի խաղաղության, կայունության եւ բարօրության տարի: Անցնող տարին նշանակալի տարի էր հայ-վրա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## Տ. ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎԹՅԱՆ. «ԹՈՂ 2022 ԹՎԱԿԱՆԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԶԱՐԹՈՆՔԻ ՏԱՐԻ ԼԻՆԻ»

Սիրելի վիրահայ հավատավորներ, սիրելի վրաց ժողովուրդ, ուրախ եմ «Վրաստան» թերթի միջոցով եւս շնորհավորել ձեզ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան գեղեցիկ ու լուսավոր տոների առթիվ: Մաղթում եմ, որպեսզի 2022 թվականը լինի առաջադեպ, ուրախության եւ ամենակարեւորը, առողջության տարի բոլորիս ընտանիքներում: Որպեսզի Աստուծու ողորմությամբ վերջապես ավարտվի համավարակը եւ կարողանանք բնականոն հունով շարունակել մեր

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)





ԳՈՐԾԱԴԻՐ

# ՊԱՏՎԱՍՏՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ 200 ԼԱՐԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ԿՏՐՎԻ ՆԱԵՎ ՀՈՒՆՎԱՐԻՆ. ՏԱՐԻՔԱՅԻՆ ՇԵՄԸ ՆՎԱՁԵՑՎՈՒՄ Է ՄԻՆՉԵՎ 50 ՏԱՐԵԿԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րիքային շենք 60-ից կկրճատվի մինչև 50 տարեկան:

Ըստ Իրակլի Ղարիբաշվիլու, 200 լարիի խրախուսանքը, ինչպես նաև տարիքային շենքի նվազեցումը կնպաստի պատվաստման ցուցանիշի առավել բարձրացմանը, որը կորոնավիրուսի դեմ պայքարի ամենաարդյունավետ հնարավորությունն է:

- Կառավարությունը բյուջեից բավականաչափ գումար կհատկացնի: Գումարը ծառայելու է 50 տարեկանից բարձր քաղաքացիներին խրախուսելու եւ 200-ական լարի տրամադրելու գործընթացին,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Միաժամանակ խորհուրդը վերահաստատեց հանրային հաստատություններում հունվարի 1-10-ը ոչ աշխատանքային օր հայտարարելու որոշումը: Նման հանձնարարականով խորհուրդը դիմեց նաև մասնավոր հաստատություններին:

Վաճառվող խորհուրդը կրկին անգամ դիմում է քաղաքացիներին՝ խուսափել մարդաշատ հավաքներից, կրել շնչադիմակ, պահպանել սոցիալական հեռավորություն եւ ակտիվ մերժել պատվաստման գործընթացը:

## ՋՈՒՐԱԲ ԱԶԱՐԱՇՎԻԼԻՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐ

Դեկտեմբերի 27-ին Վրաստանի կառավարության նիստում վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ Վրաստանի առողջապահության նախարարի պաշտոնում էկատերինե Տիկարաձեին կփոխարինի Ջուրաբ Ազարաշվիլին:



- Ինչպես գիտեք, Էկատերինե Տիկարաձեն հրաժարական է տվել, եւ ես ցանկանում եմ առաջին հերթին շնորհակալություն հայտնել նրան աշխատանքի համար եւ հաջողություններ մաղթել: Այսօր ներկայացնում եմք առողջապահության նոր նախարար Ջուրաբ Ազարաշվիլին: Նա բիզնեսի կառավարման մագիստրոս է, ունի ֆինանսական կառավարման դեմ փորձ: Բանիմաց մենեջեր է: Նրա ամբիջակա՞ն ղեկավարությամբ իրականացվել են մի շարք կարևոր ծրագրեր:

Ջուրաբ Ազարաշվիլին շնորհակալություն հայտնեց վարչապետին վստահության համար:

Նշենք, որ Ջուրաբ Ազարաշվիլին զբաղեցրել է Վրաստանի պաշտպանության փոխնախարարի պաշտոնը: 2021 թվականի փետրվարի 2-ը եղել է Վրաստանի ՊՆ «Դելտա» պետական ռազմական գիտատեխնիկական կենտրոնի գլխավոր տնօրենը: Հանդիսացել է «Թբիլիսիանշենի» գլխավոր տնօրենը: Տարբեր տարիներին աշխատել է կոմերցիոն կառույցներում:

Հիշեցնենք, որ Էկատերինե Տիկարաձեն առողջապահության նախարարի պաշտոնից հրաժարվելու որոշման մասին հայտարարել էր դեկտեմբերի 9-ին:

ԱՄԱՆՈՐՅԱ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

## ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱՊՈՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆԵՂՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ցական հարաբերությունների համար: Չմայած համավարակի ստեղծած դժվարություններին՝ տեղի ունեցան բարձր մակարդակի մի շարք փոխայցելություններ, իրագործվեցին բազմաթիվ կարևոր պայմանավորվածություններ, նախանշվեցին նոր ծրագրեր: Իսկ օրեր առաջ Թբիլիսիում երկու երկրների վարչապետերի համանախագահությամբ տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի միջև տնտեսական

համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 11-րդ նիստը, որի ընթացքում տեղի ունեցած քննարկումներն ու ձեռք բերված պայմանավորվածությունները խոստանում են նոր հորիզոններ բացել հայ-վրացական բարեկամական հարաբերություններում:

Հայ եւ վրացի ժողովուրդների արժեհամակարգում ընտանիքն ունի առանցքային նշանակություն, եւ նաև դա է պատճառը, որ ընտանեկան տոն համարվող Նոր տարին առանձնահատուկ վերաբերմունքի է արժանանում մեր կողմից:

Տա Աստված, որ 2022 թվականին ամեն հարկի տակ թեւածն սերը, ջերմությունն ու լավատեսությունը, իրականություն դառնան մեր բոլոր բարի ու նվիրական ցանկությունները, հույսերն ու սպասումները: Հայաստանն ու Վրաստանն էլ Նոր տարում գրանցեն նորանոր ձեռքբերումներ ու հաջողություններ:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ: Աստված պահպան հայ եւ վրացի եղբայրական ժողովուրդներին:

## Տ. ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԳԱՊԵՏ ԴԱՎԹՅԱՆ. «ԹՈՂ 2022 ԹՎԱԿԱՆԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԶԱՐԹՈՆՔԻ ՏԱՐԻ ԼԻՆԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կյանքը այս ու գալիք բոլոր տարիներում՝ հանուն մարդկության բարօրության: Թող Աստծու ողորմությունը, Աստծու Աջը մշտապես հովանի լինի բոլորիս, եւ մեր գործով, մեր ապրածով, մեր ծառայության մեջ կարողանանք է՛լ ավելի մոտենալ մեր Հայրերի Աստծուն ու է՛լ ավելի արժանանալ նրա անչափ ողորմությանը: Թող 2022 թվականը դառնա ազգային վերագարթոնքի տարի: Թող այն խաղաղություն բերի մեր տարածաշրջանում՝ այլևս վերջ դնելով պատերազմի արհավիրքին: Թող 2022 թվականը մեր թեմի, համայնքի, Վրաստանի եւ Հայաստանի

եւ ընդհանրապես ողջ մարդկության համար դառնա նորանոր ձեռքբերումների ու նորանոր հաջողությունների տարի՝ միայն ուրախությամբ ու երջանկությամբ բերելով յուրաքանչյուրիս:

Մեր երախտագիտությունն ու առաջնորդական օրհնությունն ենք բերում Վրաստանի իշխանություններին՝ մեր երկրի բազմազանության ավանդույթը պահպանելու եւ նրա զարգացմանն օժանդակելու համար:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

**ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂԱՓՈՒ ՍՈՒՐԲ ԵՎԵՂԵՑՈՒ ՎԻՈՂԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ**

ՕՐԵՆՍՊԻՐ ՄԱՐՄԻՆ

## ՇԱՎԱ ՊԱՊՈՒԱՇՎԻԼԻՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Խորհրդարանի նախագահի պաշտոնում ընտրվելուց առաջ՝ Շավա Պապուաշվիլին խոսքով դիմեց պատգամավորներին եւ պատասխանեց նրանց հարցերին, շեշտելով, որ հնարավոր կանի երկրին ու ժողովրդին արժանապատվորեն ծառայելու համար:

- Շնորհակալություն խորհրդարանական մեծամասնությանը խորհրդարանի նախագահի պաշտոնում ինձ առաջադրելու եւ հայտարարված վստահության համար: Սա մեծ պատիվ է պատասխանատվություն է հանրության եւ մեր քաղաքական թիմի համար: Ուստի ես կանեմ ամեն ինչ՝ արժանապատվորեն ծառայելու մեր երկրին ու ժողովրդին: Իմ շնորհակալությունը՝ Կախա Կուճավային, ով քաղաքականապես դժվար պահին արժանապատվորեն ղեկավարեց խորհրդարանը եւ կարողացավ համակարգել խորհրդարանական առօրյան,- ասաց Շավա Պապուաշվիլին:

Շավա Պապուաշվիլին ավարտել է Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը՝ միջազգային իրավագետի մասնագիտությամբ: Իրավագիտության մագիստրոս է, պաշտպանության եւ անվտանգության հարցերով փորձագետ: Կովկասյան համալսարանի, Իլիայի համալսարանի ասոցացված պրոֆեսոր է: 2017-2020 թվականներին գլխավորել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության Վրաստանի թիմը:

2020 թվականին «Վրացական երազանքի» ընտրական ցուցակով համամասնական ընտրակարգով ընտրվել է Վրաստանի 10-րդ գումարման խորհրդարանի պատգամավոր:

Նշենք, որ խորհրդարանի նախագահ Կախա Կուճավան դեկտեմբեր 24-ին հայտարարեց Վրաստանի խորհրդարանի նախագահի պաշտոնից եւ պատգամավորական մանդատից հրաժարվելու մասին:

Խորհրդարանական ընթացակարգային հարցերի եւ կանոնակարգերի հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալ Գուրամ Մաճարաշվիլու խոսքով՝ Կուճավան լքում է խորհրդարանը, բայց մնում է թիմում՝ որպես կուսակցության քաղխորհրդի անդամ՝ աշխատելով նախագծում:

- Հարցը քննարկվել է ե՛լ քաղխորհրդում, ե՛լ խմբակցությունում, Կախա Կուճավան բացատրել է խորհրդարանի խոսնակի պաշտոնից իր հրաժարականի պատճառները, ես եւ իմ գործընկերները քիչ թե շատ տեղյակ ենք այն մեծ նախագծից, որ Կախան ունի եւ ցանկանում է իրագործել: Նա շատ ակտիվ է եղել իր աշխատանքի մեջ՝ որպես խորհրդարանի նախագահ, եւ մենք կարող ենք վստահ լինել, որ նա խորհրդարանի ամենաաշխատասեր նախագահներից է եղել,- ասել է Գուրամ Մաճարաշվիլին:

Նշենք նաև, որ ըստ «Վրացական երազանքի» նախընտրական ցուցակի՝ Կախա Կուճավային խորհրդարանում կփոխարինի Գիա Ցազարեիշվիլին:

ԵՎԵՂԵՑԱԿԱՆ

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԻ ԳԱՐԱԿԱԼՈՒԹՅԱՆ 44-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Դեկտեմբերի 25-ին Թբիլիսիում, Երրորդության Մայր տաճարում, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի գահակալության 44-րդ տարեդարձի առթիվ Վրաց Ուղղափառ եկեղեցու Սինոդի անդամների մասնակցությամբ մատուցվեց հանդիսավոր պատարագ:



Կաթողիկոս-Պատրիարքին գահակալության տարեդարձի առթիվ իրենց շնորհավորանքներն են հղել Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

Հիշեցնենք, որ 1977 թվականին Վրաց Ուղղափառ եկեղեցու տասներկուերորդ եկեղեցական

ժողովում փակ քվեարկությամբ Կաթողիկոս-Պատրիարք է ընտրվեց Իլիա Երկրորդը: Նա պատրիարքական գահ է բարձրացել 44 տարեկանում: Ցխում-Աբխազիայի այն ժամանակվա միտրոպոլիտը 1977 թվականի դեկտեմբերի 25-ին Սվեթիցխովելի տաճարում օծվել է Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք:



# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

## ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆ

### ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԿՐԱՄԱՍԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ



Հանդիպմանը ներկա էին նաեւ Վրաստանի խորհրդարանի Ալիալցիխեի, Ադիգեմի, Բորժոմի եւ Ասպինձայի մեծամասնական պատգամավոր Անտոն Օբոլաշվիլին, նահանգապետի տեղակալներն ու երկրամասի ծառայության վարչության ղեկավարները:

Սանցիւն-Ջավախեթի տարածաշրջանի վարչությունում երկրամասի պետական լիազոր-նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին հանրագումարային հանդիպում անցկացրեց երկրամասում ընդգրկված բոլոր վեց մունիցիպալիտետների քաղաքապետների հետ:

Հանդիպմանը քննարկվեցին տարածաշրջանում ընթացիկ ենթակառուցային նախագծերի հարցը եւ 2022 թվականի համար ծրագրված աշխատանքները:

Նշենք, որ աշխատանքային հանդիպմանը հեռավար կարգով մասնակցեցին նաեւ ոչ կոմերցիոն «Տալ» ակումբի նախագահ Իրակլի Գվենետաձեն եւ ոչ կոմերցիոն «Հանցագործության վայրի կառավարման կազմակերպության» գործադիր տնօրեն Դավիթ Սունլաձեն: Նրանք ներկայացրին 2021 թվականին իրենց կազմակերպությունների կատարած աշխատանքների հաշվետվությունը եւ խոսեցին 2022 թվականին ծրագրված աշխատանքների մասին:

## ԳՆԱՀԱՏՈՒՄ

### ԳԻՎԻ ՇԱՀՆԱԶԱՐԸ՝ «ՍԱԲԱ-2021»-Ի ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ


«Վրաց գրականության մեջ նշանակալի ավանդի» համար «Սաբա-2021» գրական մրցանակը շնորհվել է ամվանի բանաստեղծ եւ թարգմանիչ, Վրաստանի գրողների միության անդամ Գիվի Շահնազարին:

Նշենք, որ «Սաբա» Վրաստանի ամենահեղինակավոր գրական մրցանակն է, որ հիմնվել է 2002 թվականին: Այն նպատակ ունի արժեւորելու ընթացիկ տարվա գրական գործընթացն ու ի հայտ բերելու լավագույն գրքերն ու դրանց հեղինակներին, թարգմանիչներին: «Սաբա» ունի ինը ամվանակարգ, որից մեկը՝ «Վրաց գրականության զարգացման մեջ ունեցած նշանակալի ավանդ» է գնահատում:

Գիվի Շահնազարը ծնվել է 1933 թվականին, Թբիլիսիում: Հայերենից վրացերեն է թարգմանել Գրիգոր Նարեկացու, Սայաթ-Նովայի, Հովհաննես Թումանյանի, Եղիշե Չարենցի, Ավետիք Իսահակյանի, Վահան Տերյանի, Սիլվա Կապուտիկյանի, Վահագն Դավթյանի, Համո Սահյանի, Պարույր Սեւակի, Պերճ Զեյթունցյանի եւ այլ գրողների ստեղծագործություններ: Գ.Շահնազարը վրացերենով է ներկայացրել նաեւ Ալ.Պուշկինի, Անդրեյ Բլեկի, ինչպես նաեւ արխագական ու օսական պոեզիայի գոհարները: Տարբեր տարիներին Գիվի Շահնազարն արժանացել է Եղիշե Չարենցի, Իվանե Մաչաբելու մրցանակներին, ինչպես նաեւ Պատվո եւ Թբիլիսիին հավատարմության շքանշաններին: Անցած դարի ութսունականներին նա ղեկավարել է Թբիլիսիի Պ.Ադանյանի անվան

պետական հայկական դրամատիկական թատրոնը, ապա նաեւ աշխատել Վրաստանի կառավարության գրասենյակում:

«Վրաստան» թերթը սիրով միանում է Գիվի Շահնազարին ուղղված շնորհավորանքներին, ուրախ, միաժամանակ հպարտ լինելով այս պատվաբեր մրցանակի համար: Գնահատելի է, որ չնայած պատկառելի տարիքի, պարոն Գիվին շարունակում է գործել ի նպաստ հայ ու վրաց դարավոր բարեկամական կապերի: Առողջ, բեղմնավոր ու աննահանջ տարիներ ենք մաղթում Ձեզ, սիրելի պարոն Գիվի՝ սիրո ու ջերմության մթնոլորտում: Ընդունեք նաեւ մեր շնորհավորանքը Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առիթով:



ԳԻՎԻ ՇԱՀՆԱԶԱՐ

### ԾԱՆՐԱՄԱՐՏԻԿ ԼԱՇԱ ՏԱԼԱԽԱԶԵՆ ԵՎ ՁՅՈՒԴՈՒՍ ԼԱՇԱ ԲԵՔԱՌՈՒՐԻՆ՝ «2021-Ի ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐ»



Վրաստանի ազգային օլիմպիական կոմիտեի կազմակերպմամբ անցկացվեց անցնող տարվա լավագույն մարզիկների պարգևատրման արարողությունը: Հատկանշական է, որ «2021 թվականի լավագույն մարզիկներ» անվանակարգում բացահայտվեցին երկու հաղորդներ՝ ծանրամարտիկ Լաշա Տալախաձեն եւ ձյուղդիստ Լաշա Բեքաուրին:

«Ձմեռային մարզաձեւերում լավագույն մարզիկ» անվանակարգում չնշկասահորդ Սորիս Դվիթելաշվիլին, «2021 թվականի հայտնագործություն օլիմպիական հույս» տղաների շրջանում ընթացած մարտիկ Լեռի Աբուլաձեն, իսկ կանանց շրջանում՝ ձյուղդիստ Էթերի Լիպարտելիանին: «Լավագույն երիտասարդ մարզիկ»

անվանակարգում ջրագնդակի հավաքականի անդամ Գիորգի Մաղրաբվելիձեն, իսկ «Լավագույն մարզիչ» մրցանակը բաժին ընկավ երկրի ձյուղդի հավաքականի գլխավոր մարզիչ Լաշա Գուջեջիանուն: Անցնող տարվա լավագույն մարզական ֆեդերացիա ճանաչվեց ծանրամարտի ազգային ֆեդերացիան: «Օլիմպիական շարժման մեջ ձեռք բերած բացառիկ հաջողությունների» անվանակարգում մրցանակ շնորհվեց Նինո Սալուբվաձենին:

### ՎՐԱՅԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՖԻԼՄԵՐԸ՝ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԼՎԱՍԳՈՒՅՆ ԿԻՆՈՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՅԱԿՈՒՄ

Վրացի ռեժիսորների երկու ֆիլմերը, կինոյի վերաբերյալ Film Comment ամերիկյան հրատարակության (Լինքոլն-կենտրոնի կողմից թողարկվում է Նյու Յորքում) համաձայն, տեղ են գտել 2021 թվականի լավագույն կինոնկարների ցուցակում:

Դրանք են Ալեքսանդր Կոբերիձեի «Ի՞նչ ենք տեսնում, երբ նայում ենք երկնքին» դրաման եւ Սալոմե Ջաշիի «Սանձահարում» վավերագրական ժապավենը: Վարկանիշի կազմում մասնակցել են մինչեւ հարյուր կինոգետներ, լրագրողներ եւ կինեմատոգրաֆիստներ: Լավագույն գեղարվեստական ֆիլմերի Film Comment-ի վարկանիշում «Ի՞նչ ենք տես-

նում, երբ նայում ենք երկնքին» վրացական ֆիլմն այդ կատեգորիայում զբաղեցրել է 8-րդ տեղը: Ինչ վերաբերում է Սալոմե Ջաշիի «Սանձահարում» ֆիլմին, ապա այն դասվել է լավագույն ֆիլմերի ցուցակում, որոնք դեռեւս կինոթատրոններում չեն ցուցադրվել (Best Undistributed Films of 2021): Ֆիլմը զբաղեցրել է 7-րդ հորիզոնականը:

## ԿԻՐԱԿԱՆ

### 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ԿՀԱՆՁՆԵՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության որոշման համաձայն, Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնը պատրաստում է քննություններ Վրաստանի դպրոցների հայոց լեզվի եւ գրականության մանկավարժների համար: Ի տարբերություն վրացալեզու դպրոցների ուսուցիչների քննության, ոչ վրացալեզու դպրոցներում մայրենի լեզվի եւ գրականության մանկավարժների համար նման քննավորումը Վրաստանում առաջին անգամ կանցկացվի 2022 թվականին:

Հայոց լեզվի եւ գրականության քննության թեստերը կկազմվեն Վրաստանի Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի (NAEC) կողմից, կստուգվեն հիմնականում հետեւյալ հմտություններն ու ունակությունները.

\* ազգային ուսումնական պլանի հիմնական պահանջների իմացություն,

\* առարկայի ուսուցման համար պարտադիր լեզվաբանական եւ գրական նյութի իմացություն,

\* ուսումնական գործընթացն ապահովելու համար գնահատման տարբեր մեթոդների կիրառում,

\* անձանոթ տեքստն ըմբռնելու եւ վերլուծելու ունակություն,

\* քննադատական մտածողության ունակություն,

\* գրելու ունակություն:

Միաժամանակ ուսուցիչները պետք է կարողանան ընկալել առարկայական ծրագրով նախատեսված տեքստերը, ինչը, իր հերթին, նախատեսում է գեղարվեստական աշխատության մեջ պատկերված կերպարների, թեմաների եւ գաղափարների, շարժառիթների, առանձին երկխոսությունների, իրավիճակների, ելեւէջների, ենթատեքստերի բովանդակության ու կերպարների վարքի շարժառիթի համապատասխան ընկալումը: Բացի այդ, քննարկման ստեղծագործությունների իմաստալի եւ զգայական բովանդակության ընկալումը, տրոպի (գեղարվեստական խոսքի արտահայտչամիջոցների) ընկալումը, գրականագիտական տեքստերի ընկալումը, ինչի համար անհրաժեշտ է հեղինակային հիմնավորումների քննադատական վերլուծության ու գնահատման ունակություն, բանավեճի տրամաբանական միտվածությունն ու քննարկվող հարցերի շուրջ անձնական դիրքորոշման սահմանումը:

Սանկավարժից պահանջվում է գրական տեքստերում այս կամ այն դարաշրջաններին բնորոշ յուրահատուկ գաղափարների կամ հիմնախնդիրների իմացություն, ինչպես նաեւ նա պետք է ունենա մի կողմից գրական գործընթացում դարաշրջանի յուրահատկությունների, իսկ մյուս կողմից՝ հասարակության գիտակցության վրա գեղարվեստական գործի ազդեցության պարզաբանման ունակություն:

Ուսուցիչը պետք է կարողանա միեւնույն դարաշրջանի տեքստերում հիմնախնդիրների, նմանեցման, տարբերության տեսանկյունից (տարբեր դարաշրջանների տեքստերում միեւնույն թեմաների, գաղափարների, հիմնախնդիրների եւ դրանց միմյանց հետ համեմատության մեկնաբանման) նման կամ միանման հիմնախնդիրների վերլուծությունը տարբեր երկրների կամ մշակույթների ներկայացուցիչների գործերում:

Նման պահանջներին համապատասխանելու համար, ուսուցիչը պետք է ունենա անկախ ստեղծագործական մտածելակերպ, աշխատության նկատմամբ քննադատական, տրամաբանական եւ հիմնավորված բանավեճի եւ գրական տեքստերի, առանձին դրվագների կամ այլ գեղարվեստական գործերի միջեւ կապ հաստատելու ունակություն:



ԱՄՍՆՈՐՅԱ ՉԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԴԵ, ՄԻ ՔԻՉ ԵՍ ՈՒՆԵՄ ԻՄ «ՓԱՅՆ», ՄԻ ՔԻՉ ԷՆ՝ ՆԱԶԻՍ...»

Այս ընտանիքում հունվարի 1-ը երկու խորհուրդ ունի՝ Նոր տարվա ու քալ-բատոնի Նազիի ծննդյան: Աղպես արդեն 57 տարի: Այն պահից, երբ Էդուարդ Գալեջյանն ու Նազի Թեղիաշվիլին ամուսնացան: Երուարդին ճանաչելով՝ Նազին ճանաչեց նաև հայ ժողովրդին, ու մասին մինչ այդ գրեթե ոչինչ չգիտեր: Հայկրացական ընտանիքը ծնավորվեց բազմազգ թրխիսի բազմազգ թաղամասերից մեկում՝ Նավթուղիում: Երկուսն էլ հաճախում էին թիվ 85 վրացական դպրոցը, սովորում նույն դասարանում:



- Այն ժամանակ խառը ամուսնություններն ավելի շատ էին, այ բալա,- ասում է Էդուարդ պապիկը:

- Գիտե՞ս, ինչ լավ էր սովորում,- ընդհատում է նրան քալ-բատոնի Նազին,- դասարանի գերազանցիկն էր: Ես՝ չէ՛...  
Զարմացած նայում ու հարցնում են, բա ի՞նչը կարող էր գերել գերազանցիկ Էդուարդին: Էդ պապիկը հայացքը դեպի ժպտաջող Նազին է տանում ու լուրջ-լուրջ ասում:

- Դե այ բալա, ամեն մարդ ձգտում է նրան, ինչ չունի...  
Քալբատոնի Նազիի ժպիտը փոխարինվում է համով ծիծաղով ու կատակով:

- Կարելորդ կյանքում գերազանցիկ լինես, Էդո ջան,- ասում է ու ժպիտը դեմքին հյուրասիրում ինձ իրենց հայ-վրացական սեղանի բարիքներով:

Խոսում ենք հայերեն, այո, միմիայն հայերեն: Հայոց լեզուն ես այն էլ գրական, Նազին սովորեց Կիրովականում (այժմ՝ Վանաձոր), երբ միասին մեկնեցին ուսման: Ուսումնաստե՞նք ամուսնուց հետո չմտախոսե՞նք մեկը մյուսին ու ձգտումը Նազին ստիպեցին գերազանցիկության ճանապարհը բռնել ու սովորել արդեն բուռն: Երկուսով ընդունվեցին Կիրովականի պոլիտեխնիկի քիմիատեխնիկական ֆակուլտետը:

- Սկեսրայրս շատ լավ մարդ էր,- ասում է քալբատոնի Նազին,- ամեն ինչ արեց, որպեսզի երկուսս էլ սովորենք: Վարձով բնակարան վերցրեց ու գնացինք: Չնայած նրա, որ հղի էի, այդուհանդերձ սովորում էի: Ամուսինս սովորում, միաժամանակ աշխատում էր: Մենք մեր մասնագիտությամբ այդպես էլ չաշխատեցինք, բայց այդ տարիները դարձան մեր ընտանիքի ամրության հիմքը, որովհետև ավարտեցինք առավել կարելորդ՝ կյանքի «խնայողությունը»...

- Հայրս սոված էլ մնար, ուսման կտար: Որք էր, շատ հետաքրքիր պատմությամբ,- Նազինը ընդհատում է Էդո պապիկը:- Երբ ֆրոնտից վերադարձավ, եկավ քրոջ մոտ Շահումյան: Հենց այդ տեղի տեսավ մորս ու սիրահարվեց: Հորաքույրս հավանություն չէր տվել նրա զգացմունքներին, թե բա քեզ ո՞վ աղջիկ կտա՝ ոչ տուն, ոչ տեղ, ոչ աշխատանք ունես: Տատս, հորս ապագա գրքանշը, նայել էր ու ասել՝ այ հենց այդ բառերիդ համար այս տղային մարդ են դարձնելու, այդպես էլ վարվեց: Հայրս՝ Մայիս Գալեջյանը, հետագայում ոչ միայն տուն-տեղ դրեց ու ընդամենը 16 տարեկանիս Վուզա նվիրեց, այլև Կրասնոարմիյայի Կոնստանտինովսկի տնօրենը դարձավ: Ցավոք, ընդամենը 43 տարեկան էր, երբ մահացավ...  
- ...Սկեսուրս էլ շատ լավն էր,- ավելացնում է քալբատոնի Նազին:- Երբ գալիս էր իմ հայրական տուն՝ Սամտրեդիա, ամբողջ հարեանները դուրս էին բախվում նրան դիմավորելու: Տասնհինգ տարի միասին ապրեցինք: Հիշում եմ, երբ նոր էի հարս եկել, Էդոյի հորաքույրը եկավ ու ասեց՝ էն պատուհանները, որ կտրես, անկյունները լավ կմաքրես, թե չէ՛ Լուսինի ձեռքից չես պրծնի: Բայց առաջին քննությունս ու հետագա մյուսները փայլուն հանձնում էի: Շատ բան սովորեցի իմ սկեսուրից:

ընկանիս Վուզա նվիրեց, այլև Կրասնոարմիյայի Կոնստանտինովսկի տնօրենը դարձավ: Ցավոք, ընդամենը 43 տարեկան էր, երբ մահացավ...  
- ...Սկեսուրս էլ շատ լավն էր,- ավելացնում է քալբատոնի Նազին:- Երբ գալիս էր իմ հայրական տուն՝ Սամտրեդիա, ամբողջ հարեանները դուրս էին բախվում նրան դիմավորելու: Տասնհինգ տարի միասին ապրեցինք: Հիշում եմ, երբ նոր էի հարս եկել, Էդոյի հորաքույրը եկավ ու ասեց՝ էն պատուհանները, որ կտրես, անկյունները լավ կմաքրես, թե չէ՛ Լուսինի ձեռքից չես պրծնի: Բայց առաջին քննությունս ու հետագա մյուսները փայլուն հանձնում էի: Շատ բան սովորեցի իմ սկեսուրից:

- Հայերե՞սն էլ,- հարցնում են նրան:  
- Չէ, չվիր,- պատասխանում է,- հայերենը, բարբառների խավիարը, տոլման ու գաթան Շոդակաթ տատն է սովորեցրել, Կիրովականի մեր տանտիրուհին: Լավ տուն ունեին: Ես նրանց խոհանոցում էի պատրաստում մեր ուտելիքը: Շողակաթ տատիկը վրացերեն չգիտեր, ես՝ հայերեն: Մի օր, երեկ, հոգնեց ու ձեռքով բացատրեց, որ թուրք ու գրիչ բերեմ: Մեր պարապմունքներն ընթանում էին խոհանոցում՝ մի ձեռքիս մեջ շերեփը, մյուսի մեջ՝ գրիչը: Ու այդպես սկսեցի հայերեն խոսել, հայերեն պատրաստել: Եվ երբ վերադարձա թրխիսի, սկեսուրս նույնիսկ կասկածեց, որ մինչ այդ էլ գիտեի հայերեն, մտածեց՝ իմացել ու թաքցրել եմ...

Երկուսն էլ ժպտացին, հիշողությունների բեռը հանկարծ ծանրացավ... ընդգծված վրացական ու հայկական դիմազծերի, աչքերի մեջ վիշտ էր թաղված: Ընտանիքում ողբերգություն էր պատվել, երբ կորցրել էին դեռ առաջնեկին: Հետո ծնվել էին Մաիան, Մարիկան... Ընդամենը 40 տարեկանում, մահացել էր նաև Մաիան: Բայց ողբերգությունն է՛լ ավելի էր կապել երկուսին: Աստծու մխիթարությունն էլ չէր ուշացել: Բոլորովին պատահական ծանոթացել էին թրխիսից հայուհուն՝ Աննայի հետ, ով ունենալով իր ծնողներին ու ընտանիքը, անշահախնդիր շրջապատեց նրանց՝ դատեր ջերմությամբ: Հենց Աննայի միջոցով էլ կայացավ իմ ու այս բարի ընտանիքի ծանոթությունը: Այսօր Նազին ու Էդոն Աննային իրենց դուստրն են համարում, Մարիկան՝ քույր:

- Երանի իմ Աննայի նման լինեին բոլորը, մեր պահապան հրեշտակն է դարձել, Աստված խլեց ու նորից տվեց: Էհ, այ բալա,- հոգեք է համուն Էդո պապիկը,- ջահելները փոխվել են ու բոլոր ազգերի մեջ, մարդկությունը քիչ է: Այն օրը դեղատանն էի, ինձ լավ չէի գգում, փոխանակ օգնեի, կոպտեցին, դեռ մի բան էլ դեղը փորձում էին բարձր գնով վաճառել: Երբ մի լավ ջղայնացա 30 լարին անմիջապես 10 դարձավ: Այնինչ այսօրվա ջահելները պետք է, որ մեզանից էլ լավը լինեն: Այս անտեր թուրքը մեզ պետք է բարիք բերի ու ոչ թե ստեղծություն, պատերազմ... Վրացին լավ խոսք ունի՝ «... քո խոսքը քո խոսքն է, քո մեղքը քո մեղքն է» (այն ինչ թշնամանքն ավերել է, սերն է շենացրել): Կովի մեջ կան քո զուլխն են կտորելու կամ դու ես կտորելու: Ոչ առաջինն է ծիշտ, ոչ էլ՝ երկրորդը:

- Այ մարդ,- մեկ էլ ընդհատում է Նազին,- թող աղջիկը մի բան ուտի էլի:  
- Այ օրհնակ, երբեք մտածե՞լ եք, թե ինչու է վրացական խոհանոցն ամենահամովն աշխարհում-նորից սկսում է Էդո պապիկը:  
- Սուների ունենք,- առաջ է անցնում քալբատոնի Նազին:  
- Հազար են ասել, որ խոսում են սուս էլի,- զայրանում է Էդո պապիկը ու շարունակում:- Այդ սուներիները հենց մենք ենք, բոլոր ազգերը, որոնք ապրում են Վրաստանում: Վրաստանը իր այդ առավելությամբ հպարտանալու մեծ հնարավորություն ունի: Աշխարհ տեսած մարդ են, ուր ասես չես եղել, բայց Վրաստանը ուրիշ է, մենք էլ՝ հետը:

- Իսկ ինչ նմանություններ ունեն հայն ու վրացին, այ օրհնակ, հենց դուք,- հարցս ուղղում են երկուսին էլ: Ու մինչ Նազի դեղան պարծիլ է պատասխանել, Էդո պապիկը վրա է բերում:  
- Դե, մի քիչ ես ունեմ իմ «փայլ», մի քիչ էլ՝ Նազիս...  
...Կողք-կողքի նստած իրար հերթ չէին տալիս: Ի դեպ, ոչ նա էր ազգը փոխել, ոչ էլ՝ մյուսը: Այդ համն ու հոտը նաև այստեղ էին թողել: Դեռ Նոր տարին չէր սկսվել, բայց ես ինձ լրիվ Ամանորյա սեղանի շուրջ էի գգում, շամպայնը ձեռքիս, նրանց ողջ ու առողջ տեսնելու մաղթանքը շուրթերիս:

Սիրելի քալբատոնի Նազի, շնորհավոր Ձեր ծննդյան օրը, Ամանորն ու Սուրբ Ծնունդը, բարօրություն, ամուր առողջություն ձեր օրհնակելի ու բարի հայ-վրացական ընտանիքին:  
Էջը պատրաստեց ԳԱՅԱՆԵ ԲՈՍՄԱՆՅԱՆԸ

ՆԿԵՐ ՀԱՅ ՈՒ ՎՐԱՑ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

ՀԱՅԵՐԵՆ ՈՒ ՎՐԱՑԵՐԵՆ ԳՐԲԱՓՈՒՆՋ՝ ԱՄՅԱ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Չնայած համավարակի ու հետպատերազմյան Հայաստանի, տարին բավական հարուստ, աշխույժ ու բովանդակալից էր երիտասարդ թարգմանչուհի Ասյա Դարբինյանի կյանքում: «Վրաստանի» ընթերցողին հիշեցնենք, որ Ասյան ծնունդով Թբիլիսիից է, այժմ բնակվում է Երեւանում, դասավանդում Երեւանի պետական համալսարանում եւ թարգմանում հայերենից վրացերեն ու վրացերենից հայերեն: «Վրաստանի» հետ հերթական գրույցում, նա ուրախությամբ կիսվում է իր տարեվերջյան ձեռքբերումներով, որոնք անխտիր ծառայում են հայ-վրացական գրական կապերի բարի շարունակությանն ու կատարելագործմանը:

- Մինչ այժմ թարգմանություններս լույս են տեսել տարբեր ամսագրերում, թերթերում, ժողովածուներում, ուստի գրքերի տարեվերջյան եռյակիս մեջ հայ դասականի Նար-Դոսի «Մեր թաղը», առաջին հոգեզավակս է: Ի դեպ, գրքի շապկի նկարի հեղինակը թբիլիսցի արդի գեղանկարիչ Թեմուր Միկոյանցն է, ում հոգաչափ շնորհակալ եմ:

- Նար-Դոսի տունն առայսօր կանգուն է Թիֆլիսի հենց կենտրոնում,- շարունակում է Ասյան,- ու թեեւ այլ բնակիչներ ունի, այդուհանդերձ բոլորը գիտեն, որ այդտեղ հայ անվանի գրող է ապրել, ով ժամանակին գրել է թիֆլիսյան վարք ու բարքի մասին ու դարին համահունչ թիֆլիսյան կերպարներ կերտել: Ուստի անչափ ուրախ եմ, որ վրացի ընթերցողը Նար-Դոսին կարողալու է նաև իմ թարգմանությամբ: Ու մանավանդ, որ «Մեր թաղը» պատմվածաշարը վրացերեն է ներկայացվում առաջին անգամ: Գիրքը հրատարակվել է Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության թարգմանական դրամաշնորհային ծրագրի ֆինանսավորմամբ, հրատարակիչը Նոդար Դումբաձեի անվան հրատարակչությունն ու գրական գործակալությունն է, խմբագիրը՝ Սզիա Բուրջանաձեն, սրբագրիչը՝ Նաթիա Դուրդուրյան: Գիրքն արդեն վաճառքում է թբիլիսյան գրախանութներում:



- Այս մեկին հաջորդեց մյուսը,- մշում է Ասյան:- Վրացերենից հայերեն իմ թարգմանությամբ լույս տեսավ ժամանակակից վրաց գրող Արչիլ Քիբոձեի «Հարավային փողոց» վեպը, որն ի դեպ «Մաբայի» մրցանակակիր է: Վեպը հրատարակվել է Վրաստանի գրողների տան թարգմանական դրամաշնորհի ֆինանսավորմամբ, Երեւանի «Վերնատուն» հրատարակչությունում, խմբագիրն է Արմեն Սարգսյանը:  
- Եվ վերջապես, տարվա հոգեզավակներիցս վերջինը՝ «Ժամանակակից հայ պոեզիայի անթոլոգիան», որը նույն-

պես Վրաստանի գրողների տան թարգմանական դրամաշնորհի ֆինանսավորմամբ հրատարակվեց, լույս տեսավ մի քանի օր առաջ: Անթոլոգիայում ընդգրկված են հայ ժամանակակից գրողներ՝ Վիլլետ Գրիգորյանը, Հասմիկ Սիմոնյանը, Մարինե Պետրոսյանը, Արփի Ոսկանյանը, Աննա Դավթյանը, Վահե Արսենը, Կարեն Անտաշյանը, Էդուարդ Հարենցը, Հուսիկ Արան, Գեւորգ Գիլանցը: Հրատարակիչը Նոդար Դումբաձեի անվան հրատարակչությունն ու գրական գործակալությունն է, տողաջերմի թարգմանիչը ես եմ, բանաստեղծական շունչ ստեղծագործություններին հաղորդել է վրաց ժամանակակից բանաստեղծուհի Դիանա Անվիմիադին, խմբագիրը՝ Նաթիա Դումբաձեի:

Ասեմ, որ անթոլոգիայի հրատարակման գաղափարը վաղուց էր ծնվել իմ ու Դիանա Անվիմիադի մոտ, քանի որ 2015 թվականից մասնակցում ենք Վրաստանի գրողների տան կազմակերպած ամենամյա միջազգային գրական փառատոնին, որի շրջանակներում ժամանակակից բանաստեղծների գործերն ենք թարգմանում: Օրինակ, 2016 թվականին Վիլլետ Գրիգորյանի բանաստեղծական շարքի թարգմանության համար արժանացանք Վախուշտի Կոտեռիշվիլու անվան մրցանակին, ինչն էլ ավելի պարտա-



վորեց-ծնունդ տալով այս մեկին ու հուսամ՝ հաջորդներին:  
- Այժմ,- շարունակում է Ասյան,- կարող եմ հանգիստ պատրաստվել Նոր տարվան: 2022 թվականը ես իմ կյանքում գիտական եմ հայտարարել: Հուսամ, վերջապես ժամանակ կգտնեմ գիտական աշխատանքս ավարտին հասցնել: Թեգիս թեման է «Հոլոկոստի համակարգերի տիպաբանական, զուգադրական քննությունը ժամանակակից վրացերենում եւ հայերենում»: Կարելորդ առողջ լինեմք, անկողուստ ու խաղաղությամբ մեջ: Մնացածը հանդգնված եմ, հաղթահարելու ենք, վերականգնելու ու շենացնելու:

Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ, իմ սիրելի Վրաստան ու Հայաստան: